ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործկոմների իրավական վիճակի տարբերությունները և սովետական պետական մարմինների համակարգում ունեցած առանձնահատկությունները չեն բացառում դրանց որոշ ընդհանրությունները։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը և ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործկոմները կազմավորվում են անմիջականորեն պետական իշխանության մարմինների կողմից, հաշվետու են նրանց և դասվում են ընդհանուր իրավասության կառավարման մարմինների թվին։ Իրենց լիազորությունների սահմաններում դրանք ղեկավարություն են իրականացնում (համապատասխանաբար միութենական հանրապետության և տվյալ վարչատերիտորիալ միավորի տարածքներում) պետական, տնտեսական, սոցիալ-կուլտուրական շինարարության բնագավառներում։ Դրանց իրավական ստատուսի այս բոլոր տարրերն այդ մարմինների ամենօրյա կապերի հիմքերն են, կապեր, որոնք առաջանում են հանրապետության տարածքում պետական կառավարումն իրականացնելու ընթացքում։

Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը՝ միութենական հանրապետության կառավարությունը, պետական իշխանության գործադիր և կարգադրիչ բարձրագույն մարմինն է։ Սահմանադրական այս դրույթից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը տվյալ հանրապետության իշխանության հատուկ մարմին է, որն այնտեղ իրականացնում է գործադիր և կարգադրիչ բարձրագույն գործունեությունը։ Այն օժտված է առանձնահատուկ պետական իշխանությամբ՝ կառավարական իշխանությամբ։

ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների սահմանադրությունների ու հանրապետությունների մինիստրների խորհուրդների մասին օրենքների վերլուծությունը թույլ է տալիս միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների հետ դրա հարաբերությունների վերաբերյալ անել հետևյալ եզրակացությունները։ Առաջին, սահմանադրությունները և մինիստրների խորհուրդների մասին օրենքները սահմանում են, որ միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդն իրավասու է լուծելու պետական կառավարման՝ միութենական հանրապետության ենթակայությանը վերապահված այն բոլոր հարցերը, որոնք սահմանադրության համաձայն չեն մտնում միութենական հանրապետության Գերագույն սովետի և նրա նախագահության իրավասության մեջ։ Երկրորդ, միութենական հանրապետության ոչ մի այլ մարմին չի բնորոշվում որպես նրա կառավարություն, պետական իշխանության գործադիր ու կարգադրիչ բարձրագույն մարմին։ Դա նշանակում է, որ միութենական հանրապետության տարածքում նրա Մինիստրների խորհրդի վրա է դրված պետական կառավարման մարմինների ղեկավարումը։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը միավորում և ուղղություն է տալիս միութենական-հանրապետական և հանրապետական մինիստրությունների ու պետական կոմիտեների, իրեն ենթակա մյուս մարմինների աշխատանքները։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդն է իր լիազորությունների շրջանակներում իրականացնում ժողո-

վրրդական դեպուտատների տեղական սովետների գործկոմների ղեկավարումը։

Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը ղեկավարվում է ՍՍՀՄ և միութենական հանրապետության սահմանադրություններով ու օրենքներով, ՍՍՀՄ կառավարության որոշումներով և իրավական այլ ակտերով։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը ՍՍՀՄ և միութենական հանրապետության օրենսդրական ակտերի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների և կարգադրությունների հիման վրա և ի կատարումն դրանց հրապարակում է որոշումներ ու կարգադրություններ, կազմակերպում և ստուգում է դրանց կատարումը։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի որոշումներն ու կարգադրությունները հանրապետության ողջ տարածքում պետական բոլոր մարմինների (բացառությամբ Գերագույն սովետի և նրա նախագահության), հասարակական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից ենթակա են պարտադիր կատարման։

Պետական զանազան ֆունկցիաների իրականացման համար կարևոր նշանակություն ունի միութենական հանրապետության վարչատերիտորիալ կառուցվածքը և նրա հիման վրա կազմավորված ժողովրդական դեպուտատների տեղական սովետների համակարգը։ Ինչպես հայտնի է, ըստ իրենց վարչատերիտորիալ կառուցվածքի միութենական հանրապետությունները հիմնականում բաժանվում են մարզային և շրջանային բաժանում ունեցող խմբերի։ Մարզային բաժանում ունեցող միութենական հանրապետություններում վարչատերիտորիալ բարձրագույն միավորը մարզն (երկրամասն) է, իսկ շրջանային բաժանում ունեցողներում՝ շրջանը։ Այս հանգամանքն իր դրոշմն է դնում միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների հարաբերությունների վրա։

Սովետական պետական մարմինների համակարգում տեղական սովետների գործկոմների տեղը և դերը սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում միանշանակ չի եղել։ ՌՍՖՍՀ-ի 1918 թ. սահմանադրության և այդ ժամանակաշրջանի սովետական մյուս հանրապետությունների սահմանադրությունների համաձայն գործկոմը սովետների համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում պետական իշխանության մարմինն էր։ 1936 թ. ՍՍՀՄ սահմանադրության և դրա հիման վրա ընդունված միութենական հանրապետությունների սահմանադրությունների համաձայն տեղական սովետների գործկոմների իրավական վիճակն էապես փոխվեց։ Նախկինում դրանք ընտրվում էին սովետների համապատասխան համագումարների կողմից, բայց քանի որ վերջիններս օրակարգի հարցերը քննարկելուց հետո դադարեցնում էին գործունեությունը, ապա գործկոմներն իրենց աշխատանքի վերաբերյալ կարող էին հաշվետվություն տալ միայն հաջորդ գումարման սովետների համագումարներին։ Գործադիր կոմիտեն գործում էր սովետին զուգահեռ, նրա ղեկավարության ու վերահսկողության ներքո։ Այն ինչպես տեղական սովետի բաղկացուցիչ մասն էր, այնպես էլ համեմատաբար ինքնուրույն պետական մարմին էր։ Այս սկզբունքային դրույթից էլ ելնում են սովետական նոր սահմանադրությունները։ Բնորոշ է, որ եթե ներկայացուցչական մարմինների վերին օղակները՝ գերագույն սովետները, ընտրում են իրենց նախագահությունները, ինչպես նաև կազմում են մինիստրների խորհուրդներ, ապա տեղերում գոյություն ունի ժողովրդական դեպուտատների տեղական սովետի միայն մեկ գործադիր և կարգադրիչ մարմին՝ տեղական սովետի գործկոմը։ Դրա համար էլ, ինչպես իրավացիորեն նշվել է իրավաբանական գրականության մեջ, գործկոմը որոշակի շրջանակներում կատարում է Գերագույն սովետի նախագահությանը (նստաշրջանների գումարում, մշտական հանձնաժողովների աշխատանքի կոորդինացում և այլն) և կառավարությանը յուրահատուկ ֆունկցիաներ[1]։ Կարևոր է նշել նաև, որ գործկոմը, նրա բաժինները և վարչությունները

[1] И. А. Азовкин, Местные Советы в системе органов власти, М., 1971, с. 99—101.

մասնակցում են սովետների իրավասությունների իրացմանը, որը սակայն չի բացառում դրանցից յուրաքանչյուրի սեփական իրավունքների և պարտականությունների առկայությունը։ Վերջիններս սերտորեն կապված են սովետի իրավասության հետ և հաճախ հանդիսանում են նրա շարունակությունն ու կոնկրետացումը[2]։

Ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործկոմները համապատասխան սովետի տերիտորիայում ղեկավարում են պետական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարությունը՝ իրենց ընտրող սովետների և պետական իշխանության կառավարման վերադաս մարմինների որոշումների հիման վրա։ Տեղական սովետների գործկոմներն իրավազոր են լուծելու սովետի իրավասությանը պատկանող բոլոր հարցերը, բացառությամբ նրանց, որոնք պետք է լուծվեն բացառապես սովետի նստաշրջաններում։ Գոյություն ունեն որոշակի հարցեր, որոնք, որպես ընդհանուր կանոնից վերապահություն, վերաբերում են միայն գործկոմների բուն իրավասությանը (նստաշրջանների գումարում, սովետի քննարկմանը տվյալ վարչատերիտորիալ միավորի տնտեսական և սոցիալական զարգացման պլանի ներկայացում, վարչական որոշ տեսակի զանցանքների վերաբերյալ գործերի լուծում և այլն)[3]։ Հետևարար, գործկոմի լիազորությունները լայն են. այն օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք նրան թույլ են տալիս տվյալ սովետի տերիտորիայում ղեկավարելու պետական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարությունը։ Դա նշանակում է, որ գործկոմն իրավունք ունի ղեկավարելու ոչ միայն ստորադաս մարմիններին, կազմակերպություններին և հիմնարկներին, այլև որոշակի ազդեցություն է գործում իրեն չենթարկվող մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների վրա։

Ժողովրդական դեպուտատների տեղական սովետները և դրանց գործկոմները համատեղ մասնակցում են պետական, տնտեսական ու սոցիալ-կուլտուրական շինարարության միասնական խնդիրների լուծմանը և իրականացնում պետական իշխանության ֆունկցիաներ։ Սակայն միայն տեղական սովետի գործկոմն է ամենօրյա, անընդմեջ, օպերատիվ ղեկավարություն իրականացնում իր տերիտորիայի պետական կյանքին վերաբերող բոլոր հարցերի նկատմամբ։

Տեղական սովետի գործկոմներն առաջնային տեղ են գրավում պետական կառավարման տեղական մարմինների համակարգում։ Դա բացատրվում է նրանով, որ նախ պետական կառավարման տեղական մարմիններից դրանք ամենահեղինակավորներն են, քանի որ ընտրվում են անմիջապես սովետների կողմից և բաղկացած են բացառապես դեպուտատներից։ Երկրորդ, դրանք ընդհանուր իրավասության կառավարման մարմիններ են և անմիջականորեն իրացնում են ամենամեծ ծավալի կառավարչական գործունեություն՝ դրա բոլոր ձևերով ու դրսևորումներով, կազմակերպում, միավորում և վերահսկում են տեղական սովետներին ենթակա բոլոր ճյուղերի, ֆունկցիոնալ և օժանդակ մարմինների աշխատանքը։

Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների հարաբերությունների իրավական հիմքն են նախ և առաջ ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների սահմանադրությունների մի շարք դրույթներ։ Սահմանադրությունը՝ սովետական պետության հիմնական օրենքը, օժտված է իրավաբանական բարձրագույն ուժով, նրա նորմերն ունեն հիմնադիր նշանակություն։

Սովետական սահմանադրական կարգավորման մեջ ինչպես միշտ, այնպես էլ այժմ կարևոր տեղ է գրավում պետական մարմինների կազմակերպման և գործունեության կարգավորումը։ Չնայած դրան, ցավոք, իրավաբանական գրականության մեջ սովետական մարմինների իրավական վիճակի սահմանադրական կարգավորման շրջանակները և ծավալն անբավարար են քննվել։ Սո-

---

[2] С. А. Авакян, Правовое регулирование деятельности местных Советов, М., 1974, с. 30.

[3] Б. М. Лазарев, Компетенция органов управления, М., 1972, с. 142.

վետական սահմանադրություններում ամրագրվել են ինչպես պետական մարմինների իրավական վիճակին, այնպես էլ դրանց փոխհարաբերություններին վերաբերող կարևորագույն, սկզբունքային մի շարք դրույթներ։ Այս տեսակետից առաջնային նշանակություն ունեն սահմանադրության մեջ ամրագրված դեմոկրատական ցենտրալիզմի և սոցիալիստական օրինականության սկզբունքները։ Սովետական պետության կազմակերպումը և գործունեությունը կատարվում են դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքին համապատասխան (պետական իշխանության բոլոր մարմինների ընտրովի լինելը վարից վեր, նրանց հաշվետու լինելը ժողովրդին, վերադաս մարմինների որոշումների պարտադիր լինելը ստորադաս մարմինների համար)։ Դեմոկրատական ցենտրալիզմը միասնական ղեկավարումը զուգակցում է տեղերում հանդես բերվող նախաձեռնության և ստեղծագործական ակտիվության, հանձնարարված գործի համար պետական յուրաքանչյուր մարմնի և պաշտոնատար անձի պատասխանատվության հետ։ Այսպիսով, դեմոկրատական ցենտրալիզմը նախորոշում է պետական ապարատի գործառության հիմունքներն ու վերադաս և ստորադաս մարմինների փոխհարաբերությունները։ Այդ սկզբունքը, նշել է Վ. Ի. Լենինը, նախատեսում է կենտրոնացում, բայց ոչ լիակատար, բացարձակ։ այլ այնպիսին, որն ապահովում է «միասնությունը, հիմնականում, արմատականում, լակոնում չի խախտվում, այլ ապահովվում է մանրամասնությունների բազմազանությամբ, տեղական առանձնահատկություններով, գործի մոտեցման տարիներով»[4]։ ՍՄԿԿ-ն միշտ էլ անհրաժեշտ ուշադրություն է դարձրել դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքների հետևողական պահպանման և ամրագրման վրա։

Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը գլխավորում է հանրապետության կառավարման մարմինների համակարգը։ Այն ապահովում է պետական կառավարման հարցերի կենտրոնացված լուծումը՝ տեղական մարմինների նախաձեռնության զարգացմանը զուգընթաց։

Լինելով տեղական սովետի ղեկավար մարմին, գործկոմը միաժամանակ պետական կառավարման մարմինների համակարգի բաղկացուցիչ օղակն է, որը կառուցված է դեմոկրատական ցենտրալիզմի հիման վրա և գործում է ոչ միայն համաձայն իր սովետի, այլև իշխանության ու կառավարման վերադաս մարմինների որոշումների։ Գործկոմների որոշումները և կարգադրությունները կարող են վերացվել ինչպես նրան ընտրած սովետի, այնպես էլ վերադաս գործադիր և կարգադրիչ մարմնի կողմից։

ՍՍՀՄ սահմանադրության 4-րդ հոդվածը և միութենական հանրապետությունների սահմանադրությունների համապատասխան հոդվածները ամրագրում են սոցիալիստական օրինականության սկզբունքը, որը կարևոր նշանակություն ունի տեղական սովետների գործկոմների հետ միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի հարաբերությունների համար։ Սովետական պետությունը, նրա բոլոր մարմինները գործում են սոցիալիստական օրինականության հիման վրա, ապահովում են իրավակարգի, հասարակության շահերի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «անհրաժեշտ է, որ բոլորը սրբությամբ պահպանեն սովետական օրենքներն ու կարգադրությունները և հետևեն դրանց կատարմանը»[5]։ Սոցիալիստական օրինականությունը պետական իշխանության իրականացման անհրաժեշտ մեթոդն է։ Այն պետական ապարատի օղակների գործունեության անքակտելի սկզբունքն է։ Պետական բոլոր մարմիններն իրենց ֆունկցիաներն իրականացնում են օրենքի շրջանակներում, անշեղորեն կատարում են օրենքների և դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի պահանջները։ Սոցիալիստական օրինականությունը պետական կառավարման բնագավառում ներառում է երկու անքակտելի պահանջ՝ պետական

---

4 Վ. Ի. Լենին, երկ, հ. 35, էջ 238։

5 Վ. Ի. Լենին, երկ, հ. 39, էջ 195։

կառավարման մարմինների համակարգի, իրավասության, կառուցվածքի, ֆունկցիաների, դրանց աշխատողների իրավունքների և պարտականություններ, թե՛ մեկի և թե՛ մյուսի՝ պետական իշխանության մարմինների, միմյանց և հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների հետ փոխհարաբերությունների իրավական կարգավորումը, ինչպես նաև կառավարման ապարատի ծառայողների կողմից իրավական նորմերի պահանջներին հետևելը[6]։ Սոցիալիստական օրինականությունը սովետական պետական կառավարման մեջ բարձրագույնս արտահայտվում է գործադիր և կարգադրիչ գործունեության ենթաօրենսդրական լինելու մեջ։ Իրավաբանական բոլոր ակտերը և պետական կառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունները պետք է խստիվ համապատասխանեն օրենքներին և պետական իշխանության մարմինների այլ ակտերին։ Սոցիալիստական օրինականության սկզբունքը ներծծվել է միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների գործունեության բոլոր կողմերի մեջ և դրանց միջև առկա հարաբերությունների իրավական հիմքի կարևորագույն տարրերից է։ Վերոհիշյալ մարմինների կողմից այս սկզբունքի իրացման նշանակությունը պայմանավորված է նրանով, որ դրանց գործունեությունն անմիջականորեն կապված է օրենքների և նորմատիվ այլ ակտերի անշեղ կատարման ու կիրառման հետ։

ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների սահմանադրություններում որոշված է սովետական հասարակության քաղաքական սիստեմի զարգացման հիմնական ուղղությունը՝ սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալումը։ ՍՍՀՄ սահմանադրության 9-րդ հոդվածում նշված է, որ «Սովետական հասարակության քաղաքական սիստեմի զարգացման հիմնական ուղղությունը սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալումն է՝ քաղաքացիների ավելի ու ավելի լայն մասնակցությունը պետության և հասարակության գործերի կառավարմանը, պետական ապարատի կատարելագործումը, հասարակական կազմակերպությունների ակտիվության բարձրացումը, ժողովրդական վերահսկողության ուժեղացումը, պետական ու հասարակական կյանքի իրավական հիմքի ամրապնդումը, հրապարակայնության ընդլայնումը, հասարակական կարծիքը մշտապես հաշվի առնելը»։ Դրա հիման վրա միութենական հանրապետությունների մինիստրների խորհուրդների և տեղական սովետների գործկոմների միջև ձևավորում են սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացմանն ուղղված հարաբերություններ։ Դա արտահայտվում է նրանում, որ այդ մարմինները համագործակցում են կառավարմանը քաղաքացիների մասնակցելու ձևերի ու մեթոդների կատարելագործման գործում։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը մեծ աշխատանք է կատարում տեղական սովետների գործկոմների կազմակերպչական-մասսայական աշխատանքը բարելավելու, մասսաներին տվյալ վարչատերիտորիալ միավորի կառավարմանը մասնակից դարձնելու համար։

Վերը նշված և սահմանադրական մի շարք այլ դրույթներ նախորոշում են միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի հետ տեղական սովետների գործկոմների հարաբերությունների հիմքերը։ Այդ հարաբերությունների բնույթը որոշող նորմերից կարևոր են նաև սահմանադրական այն նորմերը, որոնք անմիջականորեն կարգավորում են գործադիր և կարգադրիչ մարմինների հարաբերությունները[7]։

Սովետական նոր սահմանադրությունների պահանջներից ելնելով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունն անշեղորեն վարում են տեղական մարմինների և, մասնավորապես, տեղական սովետների ու դրանց գործկոմների իրավունքների ընդլայնման գիծ։ ՍՍՀՄ Գերագույն սովետի, միութենական հանրապետությունների գերագույն սովետների և

---

6 «Аппарат управления социалистического государства», ч. I, М., 1976, с. 145—146.

7 Տե՛ս Հայկական ՍՍՀ սահմանադրության 119, 121, 122, 134 հոդվածները և մյուս միութենական հանրապետությունների սահմանադրությունների համապատասխան հոդվածները։

դրանց նախագահությունների, ՍՍՀՄ կառավարության և միութենական հանրապետությունների կառավարությունների բազմաթիվ ակտերով ամրապրնդվում են տեղական սովետների գործունեության իրավական հիմքերը, ընդլայնվում դրանց լիազորությունները։ Նախ և առաջ պետք է նշել տեղական սովետների մասին օրենքները, որոնք մի շարք կարևոր հոդվածներ են պարունակում միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետի գործկոմների հարաբերությունների վերաբերյալ։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների հարաբերությունների իրավական հիմքի համար առանձնահատուկ նշանակություն ունեն միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի մասին օրենքի նորմերը։ Այդ օրենքով սահմանված են Մինիստրների խորհրդի կողմից տեղական սովետների գործկոմների ղեկավարության իրավասությունների շրջանակները։ Մինիստրների խորհուրդն իր լիազորությունների սահմաններում իրականացնում է ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործադիր կոմիտեների ղեկավարումը։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի տնօրինությանը վերապահված հարցերի քննարկմանը սահմանված կարգով մասնակցում են նաև տեղական սովետների գործկոմները։ Հանրապետության Մինիստրների խորհուրդը անհրաժեշտ փոխգործողություն է ապահովում տեղական սովետների գործկոմների և հանրապետական մինիստրությունների ու պետական կոմիտեների, ինչպես և իրեն ենթակա մյուս մարմինների միջև՝ իրականացնելու տնտեսական ու սոցիալական զարգացման պլանները, հանրապետական, միջճյուղային և ռեգիոնալ կոմպլեքսային ծրագրերը, լուծում է այդ կապակցությամբ ծագող հարցերը։

Միութենական հանրապետության Մինիստրների խորհուրդը վերահսկում է տեղական սովետների գործկոմների գործունեությունը։ Այն իր իրավասության սահմաններում իրավունք ունի վերացնել գործկոմների՝ օրենքին չհամապատասխանող ակտերը։

Պետական մարմինների իրավական վիճակը և դրանց փոխհարաբերությունները մանրամասն կարգավորվել են նաև այլ օրենքների ու օրենսդրական ակտերի իրավական նորմերով։ Երբեմն դրանք կոնկրետացնում և պարզաբանում են սահմանադրական նորմերը, իսկ երբեմն էլ պարունակում են սկզբունքային կարգավորման նշանակություն ունեցող նորմեր։ Միութենական և հանրապետական շատ օրենքներ և օրենսդրական ակտեր պարունակում են իրավական նորմեր, որոնք տեղական սովետների գործկոմների հետ միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի հարաբերությունների ուղղակի հիմքն են։ Օրինակ, ՀՍՍՀ Ջրային օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն «Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը, տեղական սովետների գործկոմները իրականացնում են ջրերի օգտագործման ու պահպանման բնագավառում պետական կառավարում»։ Այս ընդհանուր նորմից բխում է, որ իրենց լիազորությունների իրացման պրոցեսում նշված մարմինները մանում են որոշակի հարաբերությունների մեջ, որոնք առավել մանրազնին կարգավորվում են այդ օրենսգրքի այլ հոդվածներով։

Միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների հարաբերությունների համար կարևոր նշանակություն ունեն նաև ՍՍՀՄ կառավարության իրավական ակտերը։ Դրանք մեր երկրի պետական իշխանության գործադիր և կարգադրիչ բարձրագույն մարմնի ակտերն են, որոնք ենթակա են պարտադիր կատարման Սովետական Միության ողջ տարածքում՝ բոլոր մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից։ Վերջին տասնամյակների ընթացքում ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից հրատարակվել են բազմաթիվ ակտեր, որոնք կարգավորում են միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների հարաբերությունները։ Դրանցից է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1971 թ. մարտի 5-ի «Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային սովետների գործկոմների նյու-

թատերնիկական բաղադրի ամրապնդման միջոցառումների մասին» որոշումը[7]։ Միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և տեղական սովետների գործկոմների տնտեսական շինարարության, և մասնավորապես, տերիտորիայի տնտեսական և սոցիալական կոմպլեքս զարգացման բնագավառում գործունեության ղեկավարման իրավական հիմքի ամրապնդման համար կարևոր նշանակություն ունի ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1981 թ. մարտի 19-ի «Ժողովրդական դեպուտատների սովետների տնտեսական շինարարության մեջ ունեցած գերի հետագա բարձրացման մասին»[8] որոշումը։

Կոմունիզմի շինարարությունը պահանջում է հասարակական զարգացման պրոցեսների քաղաքական և կազմակերպչական ղեկավարման անշեղ բարձրացում և, հետևաբար, սովետական պետական մարմինների կազմակերպման և գործունեության ու դրանց հարաբերությունների իրավական հիմքի ամրապնդում։ Դա ամբողջովին վերաբերում է միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և գործկոմների հարաբերությունների իրավական կարգավորման զարգացմանն ու կատարելագործմանը։ Իրավական ակտերի բազմազանությունը, ակտեր, որոնք կազմում են միութենական հանրապետության Մինիստրների խորհրդի և գործկոմների հարաբերությունների հիմքը, անհրաժեշտություն է առաջացնում խմբավորել և կոդիֆիկացիայի ենթարկել դրանք, որը կնպաստի նշված մարմինների հարաբերությունների հետագա զարգացմանն ու կատարելագործմանը։

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ОТНОШЕНИЙ СОВЕТА МИНИСТРОВ СОЮЗНОЙ РЕСПУБЛИКИ С ИСПОЛКОМАМИ МЕСТНЫХ СОВЕТОВ НАРОДНЫХ ДЕПУТАТОВ

САМВЕЛ МУРАДЯН

Резюме

Правовой основой отношений Совета Министров союзной республики с исполнительными комитетами местных Советов народных депутатов являются Конституции Союза ССР и союзных республик. Конституция—Основной Закон Советского государства—имеет высшую юридическую силу, его нормы имеют основополагающее значение. Для регулирования указанных отношений важное значение имеют союзные и республиканские законы и законодательные акты, в их числе особо следует выделить Закон о местных Советах народных депутатов и Закон о Советах Министров союзных республик.

Для отношений Совета Министров союзной республики с исполнительными комитетами местных Советов большое значение имеют правовые акты Правительства СССР. Множественность правовых актов, регулирующих отношения Совета Министров союзной республики с исполкомами местных Советов, диктует необходимость их кодификации и систематизации.

---

8 «Собрание постановлений правительства СССР», 1971, № 5, ст. 37.

9 *Նույն տեղում, 1981, № 13, հոդվ. 75։*